

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
 «ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2021» ԶԵԿՈՒՅՑ

2021 թ. ապրիլի 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Զեկույցը նվիրված է այնպիսի հիմնախնդիրների բացառմանը, ինչպիսիք են մանկահասակների ամուսնությունը, կանանց ու աղջիկների՝ պատվի համար սպանությունները, կանանց սեռական օրգանների խեղումը: Որպես նման երևույթների բացառման ճանապարհ, զեկույցը նշում է կանանց՝ սեփական մարմնի վերաբերյալ որոշումներ կայացնող դառնալը:

ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մանկահասակների ամուսնություն

- Ամեն տարի գրեթե **12 միլիոն մանկահասակ աղջկա** ստիպողաբար ամուսնացնում են:
- Ամեն ժամ **ևս 20 մանկահասակ աղջկա** են ամուսնացնում

Պատվի համար սպանություններ

- Ամեն տարի տեղի է ունենում պատվի համար մոտ **5000 սպանություն**

Կանանց սեռական օրգանների խեղում

- Ամեն տարի առնվազն **4 միլիոն աղջիկ** ենթարկվում է սեռական օրգանների խեղման վտանգի



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը, զեկույցի բերած հիմնական ցուցանիշների՝ սեփական առողջության և բեղմնականիման միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնելու, ինչպես նաև սեռական հարաբերությանը, ցանկության դեպքում, ոչ ասելու կարողության տեսանկյունից, աշխարհի միջին ցուցանիշներին զիջում է միայն բեղմնականիման միջոցների առումով, այն էլ փոքր չափով: Եվս երկու ցուցանիշների առումով նկատելիորեն առաջ է, մեկ ցուցանիշով՝ հավասար:

